

Թեմայի վերնագիրը՝

ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Սիսիան, Գորիս քաղաքների սեյսմիկ ռիսկի գնահատում (կիրառական արդյունքների ներդրում)

Կազմակերպության անվանումը՝

ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ

Թեմայի ղեկավարը՝

Կարախանյան Արկաղի Ստեփանի

Ծրագրի հիմնական նպատակն է կիրառության մեջ ներդնել Սյունիքի մարզի Կապան, Սիսիան, Գորիս քաղաքների սեյսմիկ ռիսկի գնահատման արդյունքները:

Նշված քաղաքների համար կմշակվեն երկրաշարժերի սցենարներ՝ հնարավոր ուժեղ երկրաշարժերի վտանգը և կապակցված ռիսկը, քաղաքների սահմաններում սպասվող կորուստները գնահատելու համար:

Նշված յուրաքանչյուր քաղաքի երկրաշարժի սցենարին ուղղված աշխատանքները բաղկացած կլինեն հետևյալ քայլերի հաջորդականությունից՝ սեյսմիկ վտանգի հավանականային և դետերմինիստական գնահատում, երկրաշարժերի սցենարների ընտրություն՝ հիմնված սեյսմոտեկտոնական մոդելի և դեագրեգացիայի վրա, ընտրված յուրաքանչյուր սցենարի դեպքում նշված քաղաքների սեյսմիկ ռիսկի հաշվարկ:

Այս ծրագրի շրջանակներում կուսումնասիրվեն և կքարտեզագրվեն սեյսմիկ վտանգի այնպիսի պարամետրեր, ինչպիսիք են՝ գրունտի առավելագույն հորիզոնական արագացումների և սպեկտրալ արագացումների արժեքները, գրունտի դասակարգումը՝ ՀՀ ՇՆ 2006թ. սեյսմակայուն շինարարության նորմեր նորմատիվային փաստաթղթի համապատասխան: Արդյունքում՝ այս քարտեզները և արժեքները մուտքային տվյալներ կհանդիսանան ռիսկի հաշվարկներում: Ռիսկը կգնահատվի՝ հաշվի առնելով սեյսմիկ, երկրորդական երկրաբանական, անթրոպոգեն և խոցելիության ազդեցությունների հանրագումարը: Յուրաքանչյուր երկրաշարժի սցենարի դեպքում այս հաշվարկները իրենց մեջ կներառեն ընտրված քաղաքների, վնասների և կորուստների բոլոր հնարավոր տարբերակները:

Ծրագրի իրականացման ընթացքում լայնամասշտաբ կիրառություն կունենան հեռահար զոնդավորման և GIS համակարգը, մշակման և վերլուծության բարելավված տեխնոլոգիաները:

Ծրագրի արդյունքները և նրանց ներդրումը անհրաժեշտ են համապատասխան նախարարություններին, քաղաքապետարաններին, արտակարգ իրավիճակներում որոշում կայացնողներին՝ աղետների դիմակայման, գործողությունների պլանավորման, աղետների ռիսկի նվազեցման բազմաթիվ խնդիրների լուծման համար:

Ստեղծված բազմապրոֆիլային տվյալների շտեմարանները, ինչպես նաև վերը նշված քարտեզներն ու աղյուսակները, ըստ հետազոտվող քաղաքների, մեծ առևտրային հետաքրքրություն կներկայացնեն բանկերի, ապահովագրական ընկերությունների, քաղաքաշինական, հաղորդակցության և ենթակառուցվածքներով զբաղվող ընկերությունների համար: